ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԹՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

„10„ Ապրիլի 2018թ.

Թիվ 11-Ա

ԳՈՒՅՔԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով, ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով Ադրբեջանի Հանրապետության կողմից Ղարաբաղի Հանրապետությունում 2016 թվականի ապրիլին իրականացված ռազմական գործողությունների ժամանակ Զարթոնք համայնքի բնակիչ Արամ Հովհաննեսի Հովսեփյանի ցուցաբերած բացառիկ արիությունը, ծանր վիրավորվելուց հետո կրկին շարքեր վերադառնալը և հայրենիքի հանդեպ իր պարտավորությունների անձնվեր իրականացումը, նրա ներկայիս սոցիալական վիճակը և այն, որ նա ունի տրանսպորտային միջոցով տեղաշարժվելու ֆիզիկական անհրաժեշտություն, ինչպես նաև Զարթոնք համայնքի հաշվեկշռում գտնվող տրանսպորտային միջոցի մաշվածության աստիճանը, համայնքի ավագանու անդամների առաջարկությունը և Արամ Հովսեփյանի դիմումը,

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Զարթոնք համայնքի սեփականություն հանդիսացող HYUNDAI մակնիշի KMHJU81BDDU579653 նույնականացման համարի 071 LL 70 հաշվառման համարներով թեթև մարդատար ավտոմեքենան նվիրատվություն կատարել Արամ Հովհաննեսի Հովսեփյանին:
2. Առաջարկել համայնքի ղեկավարին Արամ Հովհաննեսի Հովսեփյանի հետ կնքել գույքի նվիրատվության պայմանագիր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

1. Աջոյան Յուրիկ ----------
2. Գրիգորյան Սահակ ----------
3. Հայրապետյան Գևորգ ----------
4. Մելքոնյան Գևորգ ----------
5. Մելքոնյան Նարեկ ----------
6. Ջանգոյան Մամիկոն ----------
7. Սարգսյան Խաչիկ ----------

Զարթոնքի համայնքապետ՝ Պ.Սարգսյան

Կ.Տ.

2018թ. Ապրիլի 10